



ՀԱՉԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ ՀԻՄՆԱԳՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ

Մամյո հաղորդագրություն

18-րդ դեկտեմբերի, 2009թ.

ՀՄՀ-Հայաստանը տարին ավարտում է ևս երկու պայմանագրերի ստորագրմամբ

Երևան –2009թ. դեկտեմբերի 18-ին Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ Հայաստան (ՀՄՀ-Հայաստան) ՊՈԱԿ-ը ստորագրեց երկու պայմանագրեր՝ «Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի վերականգնման (Փաթեթ 1-ին)» և «Երրորդ կարգի ջրանցքների վերականգնման (Փաթեթ 1-ին)» նպատակով:

Այս իրադարձությունը ՀՄՀ-Հայաստան ծրագրի համար առանձնահատուկ կարևոր նշանակություն ունի, քանի որ դրանցով ավարտվում են Ռոռզման ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում բոլոր տեսակի ենթակառուցվածքների շինարարության համար շնորհվող պայմանագրերը: Մնացած երկուսը, որոնց ստորագրումը նախատեսվում է իրականացնել 2010թ. գարնանը, հանդիսանալու են այս երկու շինարարությունների երկրորդ փուլը: Առ այժմ, ՀՄՀ-Հայաստանը պայմանագրեր է ստորագրել և սկսել շինարարական աշխատանքներ 6 Մայր ջրանցքների վերականգնման (Փաթեթ 1-ին և 2-րդ), 5 ինքնահոս համակարգերի կառուցման և 17 պոմպակայանների վերականգնման ուղղություններով:

Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի վերականգնման 7,6 միլիոն ԱՄՆ դոլարի պայմանագիրը (փաթեթ 1) շնորհվեց «Սահակյանշին» ՓԲԸ-ին (Հայաստան), իսկ երրորդ կարգի ջրանցքների վերականգնման 1-ին փաթեթը՝ «Երևանշին ԳԱՄ» ՍՊԸ-ի և «Կամուրջշին» ՓԲԸ համատեղ կոնսորցիումին՝ 2.3 միլիոն ԱՄՆ դոլար պայմանագրային արժեքով:

Պայմանագրերի կնքման պաշտոնական արարողությունը տեղի ունեցավ ՀՀ կառավարության մամլո կենտրոնում, որին մասնակցեցին ՀՀ փոխվարչապետ Արմեն Գևորգյանը, Կառավարման խորհրդի մյուս անդամները, այդ թվում և Շահառուների խորհրդի պատվիրակները և ԱՄՆ դեսպանատան և ՀՄԿ ներկայացուցիչները:

Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի և երրորդ կարգի ջրանցքների վերականգնման աշխատանքները ՀՄՀ-Հայաստան ծրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի հիմնական ենթաբաղադրիչներից են: Արարատյան հարթավայրը Հայաստանի ամենամեծ գյուղատնտեսական տարածքներից է և կազմում է երկրի գյուղատնտեսական ՀՆԱ-ի 30 տոկոսը, սակայն վերջին տարիներին արտադրողականության մակարդակը կտրուկ նվազել է ջրածածկման և հանքայնացման պատճառով: Նախատեսվում է, որ համակարգի վերականգնման արդյունքում դրենաժային տարածքում կավելանա գյուղատնտեսական արտադրանքի արդյունավետությունը, կկանոնակարգվեն ստորգետնյա ջրերի մակարդակը և հանքայնացումը, կնվազի բնակավայրերի ջրածածկման մակարդակը: Երրորդ կարգի ջրանցքների վերականգնումը անմիջականորեն կնպաստի ֆերմերներին ջրի մատակարարման հուսալիությունը և կնվազեցնի ջրի կորուստները: Անցած տարվա ընթացքում Արարատի և Արմավիրի 4 փորձնական գյուղերում իրականացվել են երրորդ կարգի ջրանցքների վերականգնման աշխատանքներ: Այս ծրագրի հաջորդ 14 շահառու համայնքները գտնվում են Արմավիրի, Արարատի և Վայոց Ձորի մարզերում:

Պայմանագրերի կնքման արարողությունից հետո ՀՄՀ-Հայաստանի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը պատասխանեց հարցերի ծրագրի ներկա կարգավիճակի և ծրագրային առաջընթացի վերաբերյալ, հատուկ շեշտադրում արվեց ծրագրի աշխատանքային պլաններին և առաջիկա 19 ամիսների ընթացքում նախատեսված թիրախներին:

Մինչ 2011թ. սեպտեմբեր ամիսը Հայաստանի գյուղատնտեսության և ջրային ոլորտում ՀՄԿ-ի կողմից տրամադրվելիք ներդրումները կկազմեն 180 միլիոն ԱՄՆ դոլար:

Այս միջոցառման և ՀՄՀ-Հայաստան ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության ստանալու համար խնդրում ենք այցելել՝

www.mca.am

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստանը (ՀՄՀ-Հայաստան) պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է ՀՀ կառավարության կողմից և պատասխանատու է Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի ու ՀՀ կառավարության միջև կնքված Համաձայնագրի թափանցիկ իրականացումը վերահսկելու համար: